ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 մայիսի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

66
(2916)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՄՊԻՉՄԵՆՏ. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԿԱՆ

ԱԺ «Հայաստան» խմբակցության անկուսակցական պատգամավոր Գեղամ Նազարյանը, ով մայիսի 17-ին Կիրանցում տհաճ միջադեպի կիզակետում էր, այժմ թիրախավորվում է ոչ միայն լրագրողին վիրավորելու համար, այլեւ իշխանական թեզեր առաջ տանելու համար: Անգամ համացանցում մտահոգություններ են հնչում, թե Նազարյանը գուցե չմիանա անգամ Փաշինյանին իմպիչմենտ հայտնելու նախագծին:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Գեղամ Նազարյանի հետ՝ պարզելու համար այս լարված իրավիճակում, երբ մայրաքաղաքում Բագրատ Սրբազանը ջանում է թիմը տանել դեպի իշխանափոխություն, իսկ Կիրանցում թեժ եւ լարված իրավիճակ է, Նազարյանը կմասնակցի՞ Սրբազանի առաջարկած իմպիչմենտին, թե՞ կխուսափի անվստահություն հայտնել Նիկոլ Փաշինյանին:

«Ինչ վերաբերում է այն ստոր լուրերին, թե ես, իբր, հնարավոր իմպիչմենտի դեպքում դեմ եմ արտահայտվելու կամ ձեռնպահ եմ մնալու, ապա կարճ եւ հստակ ասեմ՝ ես կողմ եմ արտահայտվելու:

Եվ ցավում եմ բոլոր նրանց համար, ովքեր իմանալով, որ իմ եւ Նիկոլ Փաշինյանի միջեւ շատ վաղուց անձնական եւ ոչ անձնական որեւէ հարաբերություն չկա, դիտավորյալ լուրեր են տարածում, թե մենք մտերմիկ հարաբերություններ ունենք:

Գուցե շատ ժամանակ անց այս եւ այլ միջադեպերի, ասեկոսեների, իմ դեմ արդեն երկար՝ ամիսներ շարունակվող ուղղորդվող արշավի մասին մանրամասն անդրադառնամ, բայց հաստատ՝ ոչ հիմա: Միայն մի խնդրանք. այս ամենի մեջ մի՛ ներքաշեք հերոս տղերքի ծնողներին: Դուք անարգանքի սյունին գամում եք՝ գամեք. հանգիստ թողե՛ք իմ բախտակիցներին: Առայժմ՝ այսքանը». - ասել է Նազարյանը:

Նա իր խոսքում նաեւ երկու անգամ նշել է, որ ցավում է լրագրողի եւ լրատվամիջոցի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպի համար:

Ստացվում է, որ իմպիչմենտը խորհրդարան մտցնելու համար անհրաժեշտ ստորագրությունները կան. սպասենք նախագծի վերջնական տարբերակի պատրաստ լինելուն եւ վարչապետի թեկնածուի հայտարարմանը: Այ դրանից հետո ՔՊ-ից եւս 18 հոգու քվեի կարիք կլինի, որ Փաշինյանը ստիպված լինի հեռանալ կառավարական կաբինետից:

Ռուս սահմանապահներն ամբողջությամբ դուրս չեն բերվի ՀՀ տարածքից. նրանք կշարունակեն իրենց գործառույթներն իրականացնել հայ-թուրքական եւ հայ-իրանական սահմանին: Այսպիսով՝ մայիսի 8-ին՝ Մոսկվայում կայացած Փաշինյան-Պուտին հանդիպումից հետո, երբ ՔՊ-ականները հպարտորեն հայտարարում էին, որ սահմանապահները դուրս կգան ՀՀ մի շարք մարզերից՝ սա ներկայացնելով իբրեւ մեծ ձեռքբերում, էլի խաբում էին: «Համաձայն ձեռք բերված պայմանավորվածության՝ 44-օրյա պատերազմի ընթացքում եւ դրանից հետո Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Արարատի մարզերում տեղակայված ռուս սահմանապահ եւ զինվորական կետերը կդադարեցնեն իրենց տեղակայումը եւ դուրս կգան այդ կետերից». - հանդիպումից հետո շտապել էր «ավետել» «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը: ՔՊ-ականներն այնպիսի մեծ ոգեւորություն եւ աղմուկ էին բարձրացրել, որ տպավորություն էր ստեղծվել, թե հաջողվել է ՀՀ ինքնիշխան տարածքում ապօրինի հայտնված ադրբեջանական զորքերին հետ շպրտել մեր հողից: Պարզվում է, սակայն, սա իշխանականների հերթական ականջահաճո եւ ուռճացված հայտարարությունն է: Ռուս սահմանապահները, թեեւ մի քանի շրջաններից դուրս են բերվելու, բայց նրանք շարունակելու են մնալ Թուրքիայի եւ Իրանի հետ (Մեղրի) Հայաստանի սահմանին: Սա հաստատել էր ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Պեսկովը՝ հայտարարելով, որ. «Կրկին հայկական կողմի խնդրանքով՝ մեր սահմանապահները կմնան հայ-թուրքական եւ հայ-իրանական սահմանին: Նրանք կմնան այնտեղ եւ կշարունակեն կատարել իրենց գործառույթները»: ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը Հ1-ի եթերում եւս հաստատել է, որ ռուս սահմանապահներն ամբողջությամբ դուրս չեն բերվելու ՀՀ տարածքից, ինչպես ՔՊ-ականներն են դա ներկայացնում. ««Զվարթնոց» օդանավակայան, 17 կետեր, Սիսիանի եւ Գորիսի բազաներ. այդտեղ բանավոր պայմանավորվածություններ են, եւ խնդրել ենք՝ այդտեղից ռուս սահմանապահները դուրս գան. ինչ վերաբերում է Հայաստան-Իրան եւ Հայաստան-Թուրքիա սահմանին, դրանք պայմանագրային են, մենք դա այս պահին չենք քննարկում». - ասել էր Գրիգորյանը: Ստացվում է՝ ՔՊ-ն գնում է ԵՄ՝ ռուսական զորքերով: Աբսուրդ:

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է իր հետաքննությունը, թե ինչպես են երեք տարի առաջ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը պահանջած ՋՈՒ պաշտոնյաները, նոր ընդդիմադիր բողոքի գործողությունների ֆոնին, այսօր նոր պաշտոն ստանում: ArmLur.am-ը գրել էր, որ մայիսի 15-ին, երբ Ազատության հրապարակում թեժ էր, ՊՆ-ում կադրային փոփոխությունների ալիք էր սկսվել: Միգուցե այդ ճանապարհով ՊՆ-ն ցանկանում էր համակարգում հնարավոր ընդվզումները կանխելու համար նոր պաշտոններով «կաշառել» գնդապետներին: Սակայն, այս նշանակումների մեջ ամենաուշագրավն այն է, որ նոր պաշտոնի նշանակվածներից ոմանք դեռեւս 3 տարի առաջ պահանջում էին Նիկոլ Փաշինյանի հրաժարականը: Բանն այն է, որ 44-օրյա պատերազմից մեկ տարի հետո՝ 2021 թվականի փետրվարի 25-ին, ՋՈՒ ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանը պահանջում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը, ու այդ հրաժարականին միացել էին ՊՆ մի շարք գնդապետներ, գերերալներ ու վարչության պետեր: Եվ ահա, նրանցից մեկը ՋՈՒ ԳՇ անձնակազմի կառավարման գլխավոր վարչության համալրման վարչության պետ-ԳՎՊ տեղակալ, գնդապետ Հրաչ Լյուդվիկի Ստեփանյանն էր, որը նախօրեին նշանակվեց ՊՆ կադրային քաղաքականության գլխավոր վարչության պետ՝ ազատվելով ՀՀ ՊՆ կադրային եւ ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչության պետի պաշտոնից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանի մտերիմները իրավապահներին բանավոր կերպով դիմել են՝ հորդորելով ցույց տալ իրենց տարածքի պայթյունի գործով ենթադրյալ հանցագործի լուսանկարը, որպեսզի հասկանան, թե ով է նա, սակայն իրավապահները մերժել են՝ նշելով, թե խիստ քննություն է, ուստի պաշտոնապես պետք է դիմեն, որից հետո կքննարկեն ու կորոշեն՝ կարող են ցույց տալ գործով ենթադրյալ մեղադրյալին, որն իրենց խանութի տարածքում պայթուցիկ է տեղադրել: Հիշեցնենք, որ գրեթե 2 տարի անց ՔՊ պատգամավոր Հայկ Սարգսյանի ընտանիքին պատկանող խանութի տարածքում պայթյուն իրականացրած ենթադրյալ հանցագործին բացահայտել են, բայց գտնվելու վայրը չգիտեն ու հետախուզում են հայտարարել եւ մինչ օրս փնտրում են: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է, թե ով է հետախուզվողը. նա Երեւան քաղաքի բնակիչ Գարեգին Վ.-ն է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նրա անունը տվել են ՔՊ գրասենյակի, ՔՊ պատգամավոր Գագիկ Մելքոնյանի տանը պայթուցիկների գործով կալանավորվածները: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ պատգամավոր Հայկ Սարգսյանի հայրը՝ Զարեհ Սարգսյանը, մեզ ամիսներ առաջ հայտնել էր, որ իրեն կամ որդիներին չեն հրավիրել հարցաքննության: Ըստ նրա՝ հետախուզվողին չեն ճանաչում, անգամ անվան ու ազգանվան առաջին տառն էլ իրենց ոչինչ չի ասում:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ ՉՊԵՏՔ Է ՎԱԽԵՆԱ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒՅ»

«Տավուշը հանուն հայրենիքի» քաղաքացիական շարժումը Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի գլխավորությամբ՝ մայրաքաղաքում ակցիաներ է իրականացնում՝ այդպիսով արտահայտելով անհամաձայնությունը Տավուշում տիրող իրավիճակի, միակողմանի զիջումների վերաբերյալ:



Սրբազանի առաջնորդած շարժմանը միացել են բազմաթիվ մարդիկ, որոնց թվում են հայտնի եւ սիրված երգիչներ, դերասաններ, արվեստի ներկայացուցիչներ, հասարակական-քաղաքական դեմքեր:

Չնայած նրան, որ շարժմանը աջակցում եւ միանում են արվեստի ներկայացուցիչներ, շատերը լուռ ու անտարբեր են մնում եւ դիրքորոշում չեն հայտնում շարժման մասին, այն դեպքում, երբ 2018 թվականին նրանցից շատերը ակտիվորեն մասնակցություն են ունեցել 2018 թվականի «թավշյա հեղափոխությանը»:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» թատրոնի գեղարվեստական ղեկավար Արթուր Սահակյանի հետ:

Մեզ հետ զրույցում Արթուր Սահակյանն ասաց, որ նա անձամբ ամեն երեկո մասնակցում է Սրբազան հոր կազմակերպած հավաքներին:

-Ես ամեն երեկո այնտեղ եմ, մերոնցից էլ մարդկանց այնտեղ տեսել են: Այնպես որ, աջակցությունը բնականաբար կա: Ես իմ անունից խոսեմ, քանի որ մենք («Գոյ» թատրոն խմբ.) ցրված ենք, լոկացիա չունենք, բայց ես ամեն երեկո այնտեղ եմ:

Անդրադառնալով նաեւ 2018 թվականի հեղափոխությանը՝ Սահակյանը նշեց, որ նա չի մասնակցել, սակայն թատրոնից եղել են մարդիկ, որոնք մասնակցել են 2018 թվականի «թավշյա հեղափոխությանը»:

-Ես չեմ մասնակցել 2018 թվականին, նրանք սպիտակ են հագել, ես՝ սեւ եմ հագել: Մեր մեջ մի ՔՊ-ական կար՝ Մանուկյան Արթուր, որ հետո պատգամավոր դարձավ: Առհասարակ, այն ժամանակ էլ, հիմա էլ, միացան, երբ արդեն ակնհայտ էր այդ ամեն ինչ: Ես միայն իմ անունից կարող եմ պատասխանել, որ հիմա աջակցում եմ Սրբազանին, սակայն նախորդ անգամներն ինչ եղել են՝ հմայքի տակ չեմ մտել, հմայք չկա էլ:

Արթուր Սահակյանը նաեւ խոսեց այն արվեստի գործիչների մասին, որոնք մինչ օրս լուռ են:

Վերջինիս խոսքով՝ լռության պատճառը վախն ու անսկզբունքային լինելն է:

-Շատերը մտածում են, որ, թող մի բան լինի, հետո կանենք, կասենք՝ մենք վաղուց էինք ասում, այս տրամաբանությունն է: Հիմա կոնկրետ վախն է: Այդ վախը կոնկրետ ինձ համար անհասկանալի է եղել, ստորացուցիչ վախ է: Ամոթ է շատ: Իրենք արդեն փոքր չեն եւ պատասխանատվություն ստանձնելուց չպետք է վախենան:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԻՐԱՎԱՐՁԱՅԻՆ

«25 ՀԱ ՄԱՍՈՎ ՈՐԵՎԷ ԲԼԵՖ ՉԿԱ». ԳՐԻԳՈՐՅԱՆ

25 հեկտարի մասով որեւէ բլեֆ չկա, մեզ է վերադարձվում եւ հնարավորություն ենք ունենալու այդ տարածքներն օգտագործել:

Այս մասին Հանրային ՀԸ եթերում հայտարարեց ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը:

Ըստ Գրիգորյանի՝ սահմանազատման շրջանակներում շատ է քննարկվում Տավուշի 4 գյուղի՝ Ոսկեպարի, Բաղանիսի, Կիրանցի, Բերքաբերի շուրջ հնարավոր դելիմիտացիայի ազդեցությունը: Ոսկեպարում, Բաղանիսում եւ Բերքաբերում մեծ հաշվով խնդիր չեն լինի, սահմանն արդեն դելիմիտացիայի շրջանակներում հայտնի է:

«Ինչ վերաբերում է Կիրանցին, այո, որոշակի խնդիրներ կան: Ճանապարհի մասով մենք արդեն լուծումներ ունենք, կտանք: Այս պահին որեւէ խնդիր չկա երկարաժամկետ ինչ խնդիր էլ լինի, լուծելու ենք:

4 շինություն կա, որը 1976 թվականի քարտեզով չի մնում Հայաստանի Հանրապետության տարածքում, դրանցից մեկը տուն է, մեկը կացարան, մյուսը խանութվագոն է, որն այս պահին չի աշխատում, 4-րդն ավտոտնակ է:

Այս բոլոր խնդիրները Կառավարությունը հասցեագրելու է, այսինքն բնակչությունն ինչ խնդիր էլ ունենա՝ մենք լուծելու ենք:

Ճանապարհն էլ ենք կառուցելու: Այսինքն՝ ունենալու ենք ճանապարհ, որն ամբողջությամբ ՀՀ տարածքով է անցնելու, եւ ինչպես բազմիցս նշել ենք, մենք համոզված ենք, որ այս գործընթացով մենք ավելի շատ անվտանգության երաշխիքներ ենք ստեղծում». - ասաց Արմեն Գրիգորյանը:

Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ԱԺ պատգամավոր Գառնիկ Դանիելյանը սոցցանցի իր էջում գրում է.

«Այսօր Տավուշի մարզպետը ԱԱԾ աշխատակիցների ուղեկցությամբ փակ հանդիպում է ունեցել սակավաթիվ կիրանցիների հետ՝ վերահաստատելով, որ գյուղից հողատարածքներ, տներ են անցնելու Ադրբեջանին:

Կրկին խոսվել է փոխհատուցման մասին, ինչն առաջացրել է բնակիչների զայրույթն ու դժգոհությունը:

Չնայած իշխանության տարբեր ներկայացուցիչների կողմից տարվող քարոզչությանը՝ կիրանցեցին շարունակում է դեմ արտահայտվել հայրենի հողը որեւիցե գումարի դիմաց հանձնելու դավաճանական օրակարգին:

Ես շարունակում եմ հետեւել գյուղում տեղի ունեցող իրադարձություններին եւ մնալ տավուշցիների կողքին»:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՇԱՐԺՄԱՆ ԱՋԱԿԻՑ

Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը, ելնելով երկրում ստեղծված ծանր իրավիճակից, իշխանությունների կողմից տարվող կործանարար քաղաքականությունից, ինչպես նաեւ դեմ լինելով խաղաղության անվան տակ միակողմանի զիջումներին՝ ողջունում եւ իր զորակցությունն է հայտնում «Տավուշը հանուն հայրենիքի» համաժողովրդական շարժմանը:

«Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը իր ուսերին ունենալով բազմամյա պետական շինարարության փորձ, գործելով բացառապես ի շահ հայ ժողովրդի եւ Հայաստան աշխարհի, պատրաստ է հանդիպել շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանին եւ ավելի մանրամասն քննարկել հետագա անելիքները:

Կամք, հավատ եւ ողջախոհություն բոլորիս». -ասված է ՀԿԿ Կեմնտկոմի հայտարարության մեջ:

ԻՆՉՈՒ ԵՆ ՏՆՕՐԵՆԻՆ ԱՋԱՏՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Ինչպես երեկ գրել էր «Ժողովուրդ» օրաթերթը, Արագածոտնի մարզի Բյուրական բնակավայրի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Լուսինե Մկրտչյանին աշխատանքից հեռացնում են:

Այս առթիվ ամբողջ դպրոցում հայտարարված էր գործադուլ եւ դասադուլ՝ ի պաշտպանություն դպրոցի տնօրեն Լուսինե Մկրտչյանի:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է դպրոցի տնօրեն Լուսինե Մկրտչյանի հետ:

Մեզ հետ զրույցում նա ասաց, որ գործադուլ եւ դասադուլ ոչ միայն երեկ է եղել, այլեւ շարունակվում է այսօր:

«Ոչ մի քաղաքական պայքարի համար չէ դա, պարզապես մարզպետարանի կողմից նկատառումներ կան հատուկ, որը կազմակերպվեց, եւ ինձ ազատեցին աշխատանքից, այլ բան չունեմ ասելու». - ասաց Լուսինե Մկրտչյանը:

Նշենք, որ համացանցում տարածվում էր տեղեկույթ, ըստ որի՝ դպրոցի տնօրենին աշխատանքից ազատում են քաղաքական ընդդիմադիր հայացքների համար, սակայն Մկրտչյանն ընդգծեց, որ քաղաքական որեւէ պայքարի չի մասնակցել:

«Քաղաքական ոչ մի պայքարի ես չեմ մասնակցում եւ չեմ մասնակցել, որովհետեւ աշխատանքի եմ եղել: Ես իմ տեղում՝ որպես տնօրեն, աշխատել եմ հանուն դպրոցի, աշակերտների, ուսուցիչների եւ համայնքի, որը կհաստատեն ուսուցչական կոլեկտիվը, աշակերտներս եւ ողջ համայնքը: Այլ բան չեմ ուզում շարունակել, որովհետեւ շատ վրդովված եմ». - ասաց Մկրտչյանը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը ԱՄՆ այցի ընթացքում հանդիպումներ է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի քաղաքական հարցերով տեղակալ Ջոն Բասի, պետքարտուղարի՝ Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնականի առաջին տեղակալ Յուրի Քիմի, ինչպես նաեւ պետքարտուղարի ժողովրդավարության, աշխատանքի եւ մարդու իրավունքների հարցերով օգնական Ռոբերտ Ջիլքրիստի հետ:

Օրակարգում են եղել երկկողմ հարաբերությունները, տարածաշրջանային եւ համաշխարհային անվտանգության ոլորտում զարգացումները: Անդրադարձ է եղել նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների կարգավորման գործընթացին:

ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մայիսի 17-ին Ստրասբուրգում Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Գերմանիայի Դաշնային Հանրապետության ԱԳ նախարար Անալենա Բերբոքի հետ:

Զրուցակիցները գոհունակությամբ արձանագրել են երկու երկրների միջեւ բարձր մակարդակի քաղաքական երկխոսության ակտիվ դինամիկան՝ ընդգծելով ինչպես երկկողմ, այնպես էլ ԵՄ հարթակում գործընկերության խորացման միջոցով ընձեռնվող հնարավորությունները:

Անդրադարձ է կատարվել Հայաստանում ժողովրդավարության եւ օրենքի գերակայության ամրապնդման ուղղությամբ իրականացվող հաստատակամ քայլերին եւ այս ուղղությամբ միջազգային գործընկերների հետ փոխգործակցության հարցերին: «Հայաստանի կառավարությունը հանձնառու է թե՛ ժողովրդավարական բարեփոխումների, թե՛ խաղաղության օրակարգին, եւ մեր միջազգային գործընկերների շարունակական աջակցությունը կարեւոր է շոշափելի առաջընթացի ապահովման համար:»

Մտքեր են փոխանակվել նաեւ տարածաշրջանային տնտեսական ծրագրերի, դրանցում ՀՀ ներգրավվածության հարցերի շուրջ, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի բնագավառում:

Շարունակելով տարածաշրջանային թեմաների վերաբերյալ քննարկումը՝ Հայաստանի եւ Գերմանիայի ԱԳ նախարարներն անդրադարձ են կատարել Հարավային Կովկասում անվտանգային իրավիճակին: Նախարար Միրզոյանն իր գործընկերոջն է ներկայացրել Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացի վերջին զարգացումները, այդ թվում՝ Ալմաթիում խաղաղության պայմանագրի նախագծի շուրջ կայացած բանակցությունները:

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանում լարված քաղաքական իրավիճակը փոխելու միակ ճանապարհը ընտրություններն են:

Այս մասին լրատվամիջոցների հետ զրույցում ասել է Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

Նա ընդգծել է, որ միանշանակ վետո կդնի կառավարության կողմից ներկայացված «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի վրա:

Ըստ Զուրաբիշվիլիի՝ 30 տարի իր երկրին աջակցող ուժերին «գործակալ» անվանելը փակում է ճանապարհը դեպի Եվրամիություն եւ չի տեղավորվում տրամաբանության մեջ:

«Այն ժամանակը, որ մենք ծախսում ենք այս օրենքի վրա, կարող ենք ծախսել ավելի արդյունավետ բաների վրա: Միայն ընտրությունները կարող են էապես փոխել իրավիճակը երկրում. ԵՄ պաշտոնյաները պետք է լսեն ոչ միայն փողոց դուրս եկած մարդկանց, այլեւ քվեարկության գնացողների ձայնը: Եթե անգամ ես վետո դնեմ օրենքի վրա, դա խորհրդանշական է լինելու, եւ կառավարությունը, խախտելով վետոն, կընդունի այս փաստաթուղթը». - ասել է նա:

Վրաստանում խորհրդարանական ընտրությունները տեղի կունենան հոկտեմբերի 26-ին:

ԿԱՐԾԻՔ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՅԼԵՐԻՆ

«ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ջեյմս Օ'Բրայենը հայտարարել էր, որ ԱՄՆ-ն պատրաստ է պատժամիջոցներ կիրառել Վրաստանի դեմ, եթե ապացուցվի, որ ժողովրդավարությունը խարխլվել է օտարերկրյա գործակալների մասին օրենքի ընդունման գործընթացում: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լիլիթ Գալստյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Զարմանալիորեն ԱՄՆ-ն եւ առհասարակ Արեւմուտքն այսպիսի նախանձախնդրություն չցուցաբերեցին եւ պատժամիջոցներ չկիրառեցին Ադրբեջանի նկատմամբ, երբ վերջինս 2020-ին Արցախում քիմիական զենք էր օգտագործում, 9 ամիս տեւողությամբ տոտալ բկոկադայի մեջ էր պահում Արցախահայությանը, ուղղակիորեն ցեղասպանական գործողություն էր իրականացնում՝ հայաթափելով երեքհազարամյա Արցախը կամ այսօր, երբ անթաքույց ոչնչացնում է Արցախի հայկական մշակութային ժառանգությունը:

Զարմանալիորեն այն Արեւմուտքը, որը Շարլ Միշելի շուրթերով Հայաստանին նշաձողն իջեցնելու հորդորներ էր տալիս, աչք փակեց նաեւ այդ քաղաքականության հետեւանք ադրբեջանական էթնիկ զտման եւ ռազմական գործողության վրա, դառնալով ցեղասպանության գործակից եւ պատասխանատու:

Այդ նույն Արեւմուտքը աչք փակեց Ադրբեջանի բռնապետի ոչ ժողովրդավարական ընտրության վրա եւ առաջինը շնորհավորեց բռնապետին:

Այդ նույն Արեւմուտքը՝ Ֆոն Դեր Լայենի տեսքով փարվեց բռնատեր Ալիեւին՝ հայտարարելով ստրատեգիական գործընկերության եւ ակնհայտորեն ռուսական բովանդակությամբ ադրբեջանական նավթագազային առաջնահերթությունների մասին:

Արեւմուտքի կրկնակի ստանդարտները, միջազգային իրավունքի եւ սկզբունքների բռնաբարման անհաղորդությունը կամ խուլի եւ կույրի վարքագծի դրսեւորումը սպանում են հարգանքը եւ հավատը միջազգային կառույցների նկատմամբ, անգամ «ժողովրդավարություն» խիստ էլաստիկ հասկացության նկատմամբ ալերգիա առաջացնում:

Ի դեպ, այս օրերին ոստիկանական ուժերը խայտառակ բռնություններ եւ անհամաչափ գործողություններ են գործադրվում խաղաղ հանրահավաքների մասնակիցների նկատմամբ: Հայաստանը վերածվել է համատարած ոստիկանապետության՝ արեւմտյան գրանտներով «բարեփոխված» ոստիկանապետության:

Ոստիկանությունն, ըստ էության թքած ունի: Համակարգը նման վարքագիծ եւ բռնություններ է գործադրում անգամ այն բանից հետո, երբ ՀՀ ոստիկանության անհամաչափ գործողություններն արձանագրվել են Freedom House-ի եւ Պետդեպ-ի զեկույցներում:

Իսկ իրականում, այսօր Հայաստանում ո՛չ թե Մարդու իրավունքների, ո՛չ թե ժողովրդավարության «խարխլման» հետ ենք առերեսվում, այլ սահմանադրական կարգի տապալման:

Հայաստանը հարաճող բռնապետություն է՝ խարսխված ոչ թե ժողովրդավարությանմ այլ՝ ուժային կառույցների վրա:

Ժողովրդավարական արեւմուտքը կարծես թե չի տեսնում... իսկ ավելի շուտ՝ տեսնում է այն, ինչ շահեկան է:

Կարծում եմ Արեւմուտքը մտածելու բան ունի. եթե նրանց պատկերացրած Ժողովրդավարությունը նիկոլի դեմքն ունի, ապա արթնացող հայ մարդն իրավունք կունենա կողմնորոշիչներ ճշտելու.

ENOUGH IS ENOUGH!!!!

Թբիլիսիում ընդդիմության փողոցային երթում ԵՄ անդամ երկու երկրի դեսպանների ներկայությունը շատ բանի մասին է»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊԵԼ Է ՀԱԿ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման ղեկավար Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը հանդիպել է Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) ներկայացուցիչների հետ:

Լրագրողների հետ զրույցում նաեւ տեղեկացրել է, որ հանդիպմանը ՀԱԿ-ից չորս հոգի են ներկա եղել, այդ թվում՝ ՀԱԿ փոխնախագահներ Լեւոն Զուրաբյանն ու Արամ Մանուկյանը: Հայաստանի առաջին նախագահ, ՀԱԿ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ներկա չի եղել հանդիպմանը:

Հարցին, թե ՀԱԿ-ը կո՞ղմ է վարչապետի հրաժարականի պահանջին, սահմանազատման ներկա գործընթացի դադարեցմանը, սրբազանը պատասխանել է. «Այս հանդիպմանը դրա մասին ասելու խնդիր նույնիսկ չի եղել: Իրենք բազմաթիվ հեռուստաելույթներով, հրապարակային հայտարարություններով արտահայտել են իրենց կարծիքը: Քննարկվել են գործընթացների վերաբերյալ, իրենց կեցվածքի, դիրքորոշման վերաբերյալ հարցեր: Բացի դա, մենք որոշակի երկար տարիների բարեկամություն ունենք, մտերմություն ունենք: Ի վերջո հոգեւորական եմ չէ՞, բարեկամություն, մտերմություն ունեմ»:

Մինչ այս Բագրատ սրբազանը հանդիպումներ է ունեցել խորհրդարանական ընդդիմության, նախկին վարչապետների, այլ քաղաքական ուժերի եւ հասարակական գործիչների հետ: Տավուշի թեմի առաջնորդն հայտարարել է, որ քաղաքական ուժերի հետ հանդիպումների նպատակը հետագա ուրվագիծն ու ուղղությունը կառուցելն է:

ԹՈՒՆՅԱՆԸ՝ ՍՐԲԱԶԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ես բացառում էի, որ երբեւէ կունենանք մի իրավիճակ, երբ Եկեղեցին փաստացի իշխանափոխության օրակարգով շարժում կնախաձեռնի, բայց կյանքն անպես է փոխվել, որ ոչ մի բան չի կարելի բացառել: Այս մասին այսօր՝ մայիսի 17-ին, ԱԺում լրագրողների հետ զրույցում նշեց ՔՊական պատգամավոր Բաբկեն Թունյանը:

Հարցին, արդյոք հանդիպել է Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանին եւ եթե լինի առաջարկ, արդյոք կհանդիպի, նա պատասխանեց. «Եթե Բագրատ Սրբազանն ինձ պաշտոնապես հանդիպելու առաջարկ անի եւ օրակարգը ասի, կմտածեմ, բայց նման անհրաժեշտություն չեմ տեսնում»:

Հարցին՝ օրակարգը պարզ չէ՞, նա արձագանքեց. «Ոչ, ես գիտեի Կիրանցի, Ոսկեպարի, Տավուշի անվտանգությունն է օրակարգը:

Հիմա շարժում է ընթանում, մարդիկ իրենց տեսակետը արտահայտում են, անհնազանդության ակցիաներ են անում, ժողովրդավարական երկրին հարիր գործընթացներ են: Հիմա եթե իրենց կհաջողվի ժողովրդի մեծամասնությանը համոզել կամ իմպիչմենթի գործընթացը ավարտին հասցնել, ինչքան հիշում եմ՝ ժամկետներ էլ էին նշում, այդ գործընթացը յուրաքանչյուր ոք կարող է տանել առաջ: Որեւէ խնդիր չեմ տեսնում»:

Թունյանը նկատեց, որ այն օրակարգը, որը կա շարժման մոտ, խիստ տարբերվում է իրենց օրակարգից:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԻՆՉ ԿԱՆԵՆ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ

«ԵՐԹՈՒՂԱՅԻՆԻ» ԳՈՐԾՈՎ՝ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում ավարտվել է Երեւան քաղաքի բնակիչ Ս.Վ.-ի կողմից Աժ պատգամավոր Հ.Ասլանյանին վիրավորելով, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, մարդկանց անդորրը խախտելով, հասարակական տրանսպորտի բնականոն աշխատանքը խոչընդոտելով խուլիգանություն կատարելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:



Իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի մի շարք էական հանգամանքներ:

Մասնավորապես, քննությամբ ապացույցներ են ձեռք բերվել այն մասին, որ Երեւան քաղաքի հիշյալ բնակիչը, հասարակական տրանսպորտում թույլ տալով հակահասարակական վարքագիծ, կոպտորեն խախտելով հասարակական կարգը, վիրավորական արտահայտություններ է հնչեցրել երկրի ղեկավարության եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հասցեին՝ հրահրելով ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն եւ թշնամանք:

Մասնավորապես՝ 2024 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 14:10-ից 14:30-ն ընկած ժամանակահատվածում, Ս.Վ.-ն թիվ 42 երթուղային ավտոբուսում մոտենալով նույն ավտոբուսում գտնվող ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ Հ.Ասլանյանին, տեսագրելով, այնուհետեւ համացանցում տարածելու նպատակով միացնելով բջջային հեռախոսի տեսախցիկը, այն ուղղել է դեպի Հ.Ասլանյանը եւ քաղաքական հայացքներով պայմանավորված՝ անպարկեշտ արտահայտություններով ստորացնելով վերջինիս, ինչպես նաեւ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, հակադրվելով եւ անտեսելով հանրային տրանսպորտում գտնվող անձանց՝ վիճաբանությունը դադարեցնելու հորդորները, խախտել է այդ անձանց անդորրը եւ շարունակել վիճաբանությունը նաեւ իրեն դիտողություն արած անձանց հետ՝ արդարացնելով իր գործողությունները:

Ստեղծված իրավիճակի պատճառով երթուղային ավտոբուսի վարորդը ստիպված դադարեցրել է երթեւեկությունը եւ պահանջել, որպեսզի վիճաբանողները դուրս գան երթուղայինից:

Քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել նաեւ այն մասին, որ դեռեւս 2023թ. ապրիլին Ս.Վ.-ն, համացանցի տարբեր հարթակներում ուղիղ եթերով հեռարձակված հաղորդման ժամանակ, պատմել է, որ մի օր պատահաբար հանդիպել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ Հ.Ասլանյանին, ում նկատմամբ վիրավորական արտահայտություններ է հնչեցրել, որից հետո իրենց միջեւ սկսվել է խոսակցություն: Այնուհետեւ, երբ Հ.Ասլանյանը բարձրացել է երթուղային ավտոբուս, ինքը երթուղային ավտոբուսի մեջ գտնվող անձանց բարձրաձայն ասել է, որ նշված անձը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավոր Հ.Ասլանյանն է՝ քաղաքական հայացքներով պայմանավորված թիրախավորելով վերջինիս:

Նկատի ունենալով, որ վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներն առերեւույթ պարունակում են հանցագործության հատկանիշներ, նախաձեռնվել է նոր քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որը, բազմակողմանի եւ օբյեկտիվ քննություն կատարելու նպատակով, միացվել է վերոհիշյալ՝ խուլիգանության դեպքի առթիվ քննվող քրեական վարույթին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Ս.Վ.-ին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով եւ 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը՝ համակցությամբ 7.000.000 ՀՀ դրամի չափով գրավի:

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերն ուղարկվել են հսկող դատախազին:

ՔՆՀՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԸ՝ ՄԻՋԱԴԵՊԻ ԵՎ ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ մեր տեղեկությունների համաձայն՝ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հակոբ Ասլանյանի հետ երթուղային ավտոմեքենայում վիճաբանության մեջ մտած Սամվել Վարդանյանի գործով նախաքննության ավարտ է հայտարարվել:

Տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատեց նաեւ փաստաբան Վարազդատ Հարությունյանը:

Քննչական կոմիտեն Վարդանյանին մեղադրանք է առաջադրել երկու իրար հակասող հատկանիշներով: Քրեական օրենսգրքի՝ խուլիգանության ու տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ ատելություն հրահրող հրապարակային խոսքի տարածման հոդվածներով: Նա տնային կալանքի տակ է:

Սակայն, աղմկահարույց մյուս դեպքով սայլը տեղից չի շարժվում կամ, միգուցե, իրավապահները ջանասիրություն ցուցաբերել չեն ուզում:

Պատգամավոր Հակոբ Ասլանյանի հետ տրանսպորտում տեղի ունեցած միջադեպից հետո՝ ձերբակալված երիտասարդն իրեն այցելած պատգամավորներին ու փաստաբաններին պատմել էր՝ ոստիկանների ուղեկցությամբ ձերբակալվածների պահման վայր տեղափոխվելիս՝ ապրիլի 15-ի գիշերը, իր նկատմամբ իրականացվել էր բռնություն: Մասնավորապես՝ դիմակավորված 4-5 անձինք մոտեցել էին ոստիկանության մեքենային (իսկ այդ ժամանակ ոստիկանները գնացել էին՝ իրենց բնական կարիքները հոգալու), դաժան ծեծի էին ենթարկել Սամվել Վարդանյանին, իջեցրել էին տաբատը, թքել վրան:

Արդյունքում՝ բռնության մասին Աժ պատգամավոր Թագուհի Թովմասյանի հաղորդման հիման վրա՝ ՀՀ Քննչական կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ մի խումբ անձանց կողմից խոշտանգում կատարելու հատկանիշներով (Քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ): Այս գործը ոչ մի կերպ չի բացահայտվում»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ԳՈՐԾԱԴՈՒԼ ԵՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

Փաստաբան Գոռ Գեւորգյանը գրում է Իրազեկում. «Միանում եմ փաստաբանների կողմից հայտարարած գործադուլին եւ երկուշաբթի չեմ մասնակցելու դատական նիստերին ու չեմ ներկայանալու որեւէ պետական կառույց, դրանով իմ բողոքի ձայնն եմ բարձրացնելու փաստաբանների հարկային բեռի բարձրացման եւ անվճար իրավական օգնության տրամադրման արգելքի դեմ:

«ԿԱՇԱՌՔ»

ԻՆՉԻ՞ ԴԻՄԱՑ ԵՆ ԳՆԴԱՊԵՏՆԵՐԻՆ ՊԱՇՏՈՆ ՏԱԼԻՍ

Մայիսի 15-ին, երբ Ազատության հրապարակում թեժ էր, ՊՆ-ում կադրային փոփոխությունների ալիք էր սկսվել: Միգուցե այդ ճանապարհով ՊՆ-ն ցանկանում էր համակարգում հնարավոր ընդվզումները կանխելու համար նոր պաշտոններով «լռեցնել» գնդապետներին:

Սակայն, այս նշանակումների մեջ ամենաուշագրավն այն է, որ նոր պաշտոնի նշանակվածներից ոմանք դեռեւս 3 տարի առաջ պահանջում էին Նիկոլ Փաշինյանի հրաժարականը. իսկ հիմա ամեն ինչ մասին՝ ամենասկզբից:

Պատերազմից մեկ տարի հետո՝ 2021 թվականի փետրվարի 25-ին, ՋՈՒ ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանը պահանջում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը, ու այդ հրաժարականին միացել էին ՊՆ մի շարք գնդապետներ, գերերալներ ու վարչության պետեր:

ՀՀ վարչապետը եւ կառավարությունն այլեւս ի վիճակի չեն ընդունելու ադեկվատ որոշումներ՝ հայ ժողովրդի համար այս ճգնաժամային եւ ճակատագրական իրավիճակում:

ՀՀ զինված ուժերը երկար ժամանակ համբերատար կերպով հանդուրժում էր գործող իշխանության կողմից զինված ուժերը վարկաբեկելուն ուղղված «գրոհները», սակայն ամեն ինչ ունի իր սահմանները:

ՀՀ զինված ուժերը պատվով է կատարել իր պարտքը, իր ժողովրդի հետ ուս ուսի մարտնչել թշնամու դեմ:

Գործող իշխանությունների անարդյունավետ կառավարումը եւ արտաքին քաղաքականությունում ցուցաբերած լրջագույն սխալները երկիրը հասցրել են կործանման եզրին:

Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ ՀՀ զինված ուժերը պահանջում են ՀՀ վարչապետի եւ կառավարության հրաժարականը, միաժամանակ նախազգուշացնում՝ ձեռնպահ մնալ ժողովրդի դեմ ուժ կիրառելուց, ում զավակները զոհվել են՝ պաշտպանելով Հայրենիքն ու Արցախը:

Բանակը միշտ եղել է ժողովրդի հետ, ինչպես ժողովուրդն է բանակի հետ:

Եվ ահա, այս հայտարարությունից հետո Նիկոլ Փաշինյանի հրաժարականին միացել է 5-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Սմբատ Վոլոդիայի Գրիգորյանը, որին ՊՆ-ն մայիսի 15-ին նոր պաշտոն է տվել: «Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 35.1-ին հոդվածի 1-ին մասի եւ 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սմբատ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ նշանակել զինված ուժերի գլխավոր շտաբի կազմակերպչական զորահավաքային գլխավոր վարչության պետ՝ ազատելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի անձնակազմի կառավարման գլխավոր վարչության պետի պաշտոնից». - նշված է հրամանագրում:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 14-ից 15-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 88 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ «ԾՈՒՍՏՐԻՈՒԹՅՈՒՆ» Է ԱՐԵԼ

Ադրբեջանն իր համար պատմություն է հորինում, իրեն վերագրում հայերի եւ աղվանների կառուցած հին վանքերն ու եկեղեցիները, իսկ ՀՀ կառավարության տարածքային ստորաբաժանում հանդիսացող Տավուշի մարզպետարանը, գոնե խոսքով, տեր չի կանգնում Տավուշի մարզի պատմական հին, շատ նշանավոր հուշարձաններին: Տավուշում ամենահին պատմական կոթողը սահմանամերձ Բարեկամավան գյուղի հռչակավոր Բարձրյալ Խաչ նախաքրիստոնեական շրջանի բազմանիստ աշտարակաձեւ դամբարան է: Այդ նշանավոր կոթողը, ինչպես նաեւ 7-դարի Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցին, Բերդավանի Ղալինջաքար ամրոցը, Նոր Վարագավանքը, Խորանաշատը, Կողբի Մշկավանքը, Տվարաեղցին, Տավուշ բերդը եւ բազում այլ հայտնի պատմական հուշարձաններ բացակայում են Տավուշի մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքում «Ընդհանուր տեղեկություններ» խորագրի ներքո զետեղված՝ Տավուշի մարզի պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ տեղեկատվությունից, ուր տեղեկություններ կան միայն Հաղարծին վանական համալիրի, Գոշավանքի, Մակարավանքի, Կապտավանքի, Լաստիվեր քարանձավի (Անապատ), Դեղձնուտի վանքի, Ջուխտակ վանքի, Մաթոսավանքի, Աղջկաբերդի, Կիրանցի վանական համալիրի, Սրվեղի վանքի մասին: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել՝ հարցնելով, թե մարզպետարանի ինտերնետային կայքի «Ընդհանուր տեղեկություններ» բաժնի «Տավուշի մարզի պատմամշակութային հուշարձանները» ենթաբաժնում ինչո՞ւ տեղեկություններ չկան Բարձրյալ Խաչի, Բերդավանի Ղալինջաքար ամրոցի, Խորանաշատի, Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցու, Կողբի Մշկավանքի, Տավուշ բերդի եւ այլ նշանավոր հուշարձանների մասին: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ կառավարության 2004թվականի դեկտեմբերի 30-ի N929 Ն որոշմամբ հաստատված ՀՀ Տավուշի մարզի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը ներառում է 1996 հուշարձան, որը հնարավոր չէ ամբողջությամբ ներբեռնել կայքում: Ուստի մարզի հուշարձանների վերաբերյալ տեղեկություն ստանալու համար անհրաժեշտ է մուտք գործել ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում տեղադրված հղումով»: Նախկինում այդ հղումը չկար, մեր տեղեկատվական հարցումից հետո ավելացրել են հղում, որը սեղմելուց հետո՝ բացում է «Վիքիպեդիայի»՝ «Հայաստանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ» էջը: Տավուշի մարզպետարանի կայքում մարզի պատմության եւ մշակույթի հուշարձանները փոքր ծավալով են ներկայացված՝ մի քանի էջով. մարզպետարանի կայքում ինչո՞ւ չի ավելացվում տեղեկատվություն՝ մարզի շատ նշանավոր, արժեքավոր հուշարձանների մասին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՈՉ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ ԳԵՐԻՆԵՐԻՆ

Ռուբեն Վարդանյանի ընտանիքը կոչ է անում միջազգային հանրությանը՝ պահանջել Վարդանյանի եւ մյուս 22 հայ բանտարկյալների անվերապահ ազատ արձակումը. Ռուբեն Վարդանյանի ընտանիքի հայտարարությունը:

Արբեջանական դատարանը հերթական անգամ երկարաձգել է հայ բարերար, Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի նախնական կալանքի ժամկետը: Ռուբեն Վարդանյանը 2023 թվականի սեպտեմբերի 27-ից ապօրինաբար պահվում է Բաքվի բանտում:

Ութ ամիս շարունակ Ադրբեջանի իշխանություններն արհամարհել են միջազգային իրավունքը եւ մարդկային արժանապատվությունը՝ Ռուբեն Վարդանյանին պահելով անազատության մեջ՝ առանց դատավարության եւ պատշաճ գործընթացի:

Նրանք շարունակում են հրաժարվել հայտնել, թե երբ տեղի կունենա պատշաճ դատավարություն կամ լսումներ՝ իրենց, այսպես կոչված, «մեղադրանքների» հիման վրա: Վարդանյանի կալանքը եւս հինգ ամսով երկարաձգելու այս որոշումը՝ առանց պատշաճ իրավական ընթացակարգի, մարդու հիմնարար իրավունքների եւս մեկ կոպտագույն խախտում է:

Մինչ Եվրախորհրդարանի բանաձեւի, ԱՄՆ Կոնգրեսի պատժամիջոցների մասին օրինագծի եւ Ֆրանսիայի Սենատի բանաձեւի միջոցով շարունակվում է ուժգնանալ Ադրբեջանի վրա միջազգային ճնշումները, մենք՝ Ռուբեն Վարդանյանի ընտանիքը, կոչ ենք անում միջազգային հանրությանը՝ կառավարությունների, բիզնեսի ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, պահանջել Ռուբեն Վարդանյանի եւ մյուս 22 հայ բանտարկյալների անվերապահ ազատ արձակումը, եթե Ադրբեջանը ցանկանում է պահպանել COP 29-ը հյուրընկալելու արտոնությունը, որն Ադրբեջանը հռչակել է որպես «Խաղաղության համաժողով»:

«Խափանման միջոց կալանքի բազմակի երկարաձգումները՝ առանց գրավի դիմաց ազատ արձակելու մերժումը հիմնավորելու անհատականացված ու կոնկրետ որոշման, Ռուբեն Վարդանյանի իրավունքների հերթական կոպտագույն խախտումն է՝ համաձայն Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրի, որին Ադրբեջանն անդամակցում է:

Կալանքի ժամկետի երկարաձգումների միակ բացատրությունն այն է, որ այս գործը քաղաքական է, եւ որ Ադրբեջանը Ռուբեն Վարդանյանի դեմ որեւէ փաստացի ապացույց չունի՝ նրան դատապարտելու համար: Հետեւաբար, նա պետք է անհապաղ կերպով եւ անվերապահորեն ազատ արձակվի»,- ասել է Վարդանյան ընտանիքի միջազգային իրավախորհրդատու Ջարեդ Գենսերը:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ ԵՌՕՐՅԱ ԱՅՑՈՎ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆՈՒՄ Է

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եռօրյա պաշտոնական այցով մեկնել է Թուրքմենստան՝ մասնակցելու բանաստեղծ Մախթումկուլի Ֆրագիի ծննդյան 300-ամյակին նվիրված մշակույթի նախարարների միջազգային խորհրդաժողովին:

Խորհրդաժողովին կմասնակցեն աշխարհի տարբեր պետությունների բարձրաստիճան պատվիրակություններ, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, գիտական եւ ստեղծագործական հանրույթի ներկայացուցիչներ:

Համաժողովի շրջանակում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը հանդես կգա զեկույցով, ինչպես նաեւ կվարի խորհրդաժողովի հերթական սեկցիան՝ «Մախթումկուլի Ֆրագի եւ համաշխարհային մշակույթ» թեմայով:

Թուրքմեն անվանի բանաստեղծ Մախթումկուլի Ֆրագիի ծննդյան 300-ամյակին նվիրված մշակույթի նախարարների միջազգային խորհրդաժողովի միջոցառումներն իրականացվում են Թուրքմենստանի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համագործակցության շրջանակում:

ԿՆՔՎԵԼ Է ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«Ամիո բանկ» ՓԲԸ եւ ԿԳՄՍ նախարարության միջեւ կնքվել է փոխըմբռնման հուշագիր ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին կրթաթոշակ տրամադրելու վերաբերյալ:

Հուշագիրը ստորագրել են Ամիո բանկի Կորպորատիվ կենտրոնի տնօրեն Ազամատ Խակույը եւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Ազամատ Խակույը հուշագրի ստորագրումը համարում է պատմական իրադարձություն, որը պետություն եւ բիզնես համագործակցության միջոցով ստեղծում է նոր չափանիշներ ու հնարավորություններ, ինչը չափազանց կարեւոր եւ պատասխանատու աշխատանք է:

«Մեր այս առաջին փոքրիկ քայլն այն բանի ապացույցն է, թե որքան ենք մենք հավատում Հայաստանի ապագային: Այս քայլն առաջին հերթին նշանակալից ներդրում է մարդկային կապիտալում, ովքեր վաղը ստեղծելու են իրենց երազած ապագան Հայաստանի համար: Շնորհակալություն եմ հայտնում, եւ վստահ եմ, որ այս համագործակցությունը կընդլայնվի»,- ասել է Ազամատ Խակույը:

«Կրթությունը եւ մարդկային կապիտալի զարգացումը պետության առաջընթացի առաջնային գործոններ են, եւ շատ կարեւոր է, որ մասնավոր հատվածը եւս ներդրում է կատարում այս ոլորտում՝ համահունչ պետական քաղաքականությանը: Հույս ունենք՝ ձեր օրինակը կլինի վարակիչ այլ տնտեսվարողների համար եւս»,- ասել է Արթուր Մարտիրոսյանը:

«Ամիո բանկն» իրականացնում է իր առաջին մասշտաբային բարեգործական ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ տարբեր բուհերի սոցիալապես խոցելի խմբերի բարձր առաջադիմությամբ մինչեւ 25 ուսանողների կտրվի կրթաթոշակ

Ծրագրի մանրամասներին կարող եք ծանոթանալ Amio Era-ի ինստագրամյան էջում:

Կրթությունը հնարավորություն է...

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԲԱՆԿԱՅԻՆ

SWIFT ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

«Ֆասթ» բանկում մեկնարկել է «Փոխարկի՛ր եւ փոխանցի՛ր» ակցիան, որի շրջանակում մինչեւ ս.թ. մայիսի 31-ը սահմանվել է SWIFT համակարգի միջոցով փոխանցումների հատուկ սակագին՝ 1000 ՀՀ դրամ՝ ՌՌ ռուբլիով եւ 5000 ՀՀ դրամ՝ ԱՄԷ դիրհամով, վրացական լարիով, չինական յուանով եւ այլ արժույթներով փոխանցումների համար:

Ակցիայից օգտվելու համար անհրաժեշտ է բանկում կատարել 500,000 եւ ավելի դրամին համարժեք արտարժույթի փոխարկում, ապա SWIFT համակարգով միջազգային փոխանցում առնվազն փոխարկված գումարի չափով: Սակագինը գործում է Արաբական Միացյալ Էմիրություններ, Վրաստան, Ռուսաստան, Չինաստան եւ այլ ուղղություններով OUR տարբերակով դրամական փոխանցումների համար:

Միջազգային փոխանցումներ կարելի է կատարել «Ֆասթ» բանկի 24/7 գրաֆիկով գործող մասնաճյուղերում:

ՍԽԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ՝ ՏՈՒԳԱՆՔ

Կառավարությունն առաջարկում է կանոնակարգել հարկերի հաշվարկմանն ուղղակիորեն չառնչվող, սակայն հարկային մարմնի կողմից իրականացվող վերլուծական աշխատանքների համար էական նշանակություն ունեցող տեղեկատվական աղյուսակներում լրացվող տեղեկատվության սխալ՝ ոչ հավաստի լինելու դեպքում վարչական պատասխանատվության կիրառման հարցը: ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը մայիսի 17-ին առաջին ընթերցմամբ քննարկել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը:

Ակնկալվում է, որ փոփոխության արդյունքում կապահովվի հարկ վճարողների կողմից համապատասխան տեղեկատվության ամբողջական եւ ճշգրիտ ներկայացումը, միաժամանակ կհստակեցվի մաքսային եւ հարկային մարմինների քննությանը ենթակա վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի շրջանակը:

Ձեկուցողի տեղեկացմամբ տվյալները ոչ հավաստի, սխալ լրացված լինելու դեպքում առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում սահմանել պատասխանատվություն: Առաջին անգամ, երբ տեղեկատվությունը կլինի սխալ լրացված, դրան կհետեւի նախազգուշացումը: 1 ամսվա ընթացքում, եթե սխալը չուղղվի, ապա տուգանքը կկազմի 10 հազար դրամ: Երկրորդ անգամ, եթե 30 օրվա ընթացքում սխալը չուղղվի, ապա տուգանքը կկազմի նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափ:

Առաջարկվում է նաեւ օրենսգրքից հանել չգործող դրույթները:

Նախագիծն արժանացել է հանձնաժողովի դրական եզրակացությանը:

ՁԱՐԳԱՑՈՒՄ

50 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՓՄՁ-ՆԵՐԻՆ

«Ակբա» բանկի եւ Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ) համագործակցությամբ «Ակբան» ընդհանուր առմամբ 50 միլիոն եվրո կուղղի Հայաստանում փոքր եւ միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը, զարգացմանը:

Համագործակցության շրջանակում ՎԶԵԲ-ը ֆինանսական նոր գործիք է կիրառում Հայաստանում. ՎԶԵԲ-ն առաջին անգամ Հայաստանում կկիսի ֆինանսական կառույցի կողմից տրամադրված վարկերի վերադարձելիության ռիսկը: «Ակբա» բանկի կողմից փոքր եւ միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանն ու զարգացմանն ուղղվող 50 միլիոն եվրոյի մինչեւ 50% ֆինանսական ռիսկերը իր վրա կվերցնի ՎԶԵԲ-ը: Համագործակցությունը հնարավորություն կտա Հայաստանում էլ ավելի ընդլայնել ՓՄՁ-ներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը:

ՎԶԵԲ-ի նախագահ Օդիլ Ռենո-Բասոն նշել է, որ Մոնղոլիայից մինչեւ Եվրոպա Ակբա բանկն առաջին գործընկերն է, որի հետ ՎԶԵԲ-ը մեկնարկում է այս նախագիծը:

Բացի այդ, Հայաստանում գործող բիզնեսներն այս համագործակցության շրջանակում ստանալով ֆինանսավորում, հնարավորություն կունենան նաեւ օգտվել հատուկ խորհրդատվական ծառայություններից, որոնք կօգնեն նրանց զարգանալ արտասահմանյան շուկաներում:

««Ակբա» բանկը շուրջ 25 տարի համագործակցում է ՎԶԵԲ-ի հետ: Այսօր ստորագրեցինք պայմանագիր, որով մենք կարողանում ենք տրամադրել վարկեր մեր ընթացակարգերին համապատասխան, բայց ռիսկը հիսուն տոկոսի չափով կիսում ենք ՎԶԵԲ-ի հետ: Սա բանկին հնարավորություն է տալու ավելի ընդլայնված վարկային քաղաքականություն վարել, որից կշահեն նաեւ ՓՄՁ-ները». - նշել է Ակբա բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

«Այսօր մեր լավ գործընկեր «Ակբա» բանկի հետ կնքեցինք համագործակցության պայմանագիր: Պայմանագրի առանցքում եզակի պրոդուկտ է, քանի որ օգնում է ամրապնդել կապիտալը, կատարել ավելի շատ ֆինանսավորում տեղական փոքր ու միջին ձեռնարկություններում եւ նպաստել տեղական արժույթով ՓՄՁ-ների ֆինանսավորմանը:

Էֆեկտը կրկնակի է. շահում է ոչ միայն Ակբա բանկը, այլեւ գյուղական բնակավայրերը եւ փոքր ու միջին ձեռնարկությունները: Իրականում հենց դա է այս պրոդուկտի հիմնական նպատակը: Ինչպես գիտեք, դա նաեւ մեր նպատակն է. ՎԶԵԲ-ը խթանում է ՓՄՁ-ների ֆինանսավորումը»,- նշել է ՎԶԵԲ-ում Կենտրոնական Ասիայի եւ Կովկասյան տարածաշրջանի պատասխանատու Զորջ Օրլովը:

Պայմանագիրը ստորագրվել է Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական բանկի ամենամյա բիզնես համաժողովի ընթացքում, որը մեկ հարկի տակ է հավաքում ՎԶԵԲ-ի բարձրաստիճան պաշտոնյաներին, ֆինանսական աշխարհի ներկայացուցիչներին եւ բիզնեսի առաջնորդներին՝ քննարկելու եւ լուծելու գլոբալ ֆինանսական խնդիրները:

«Ակբա» բանկը Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից է, գյուղոլորտի ֆինանսավորման բացարձակ առաջատարը: «Ակբա» բանկը եւ Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական բանկը համագործակցում են 2003 թվականից եւ ունեն ավելի քան 20 տարվա համագործակցության պատմություն:

Մինչեւ օրս Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական բանկը Հայաստանում 207 ծրագրում ներդրել է ավելի քան 2 միլիարդ եվրո:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԼՈՒՐԵՐ

ՀԴՄ-Ի ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2024 թվականի ապրիլ ամսվա ընթացքում արձանագրվել են հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտման 614 դեպք եւ շուրջ 251 մլն դրամի չափով տուգանք: Արձանագրված խախտումներից 13 դեպքով 13 հարկ վճարողի մոտ արձանագրվել է 1.0 մլն դրամ եւ ավելի տուգանք՝ ընդհանուր 102.64 մլն դրամի չափով:

«Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտման դեպքերով 1.0 մլն դրամ եւ ավելի տուգանք արձանագրվել է փաստացի գործունեության հետեւյալ ոլորտներում.

մթերային խանութի, այլ, հանրային սննդի (հանդիսությունների սրահ չունեցող), բանկային, վարկային, ապահովագրական կամ այլ ֆինանսական գործունեության ոլորտներում 2 հարկ վճարողի մոտ 2 դեպքով արձանագրվել է 20 մլն դրամ տուգանք,

ծխախոտի առեւտրի ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 10 մլն դրամ տուգանք,

կոսմետիկայի, արդուզարդի եւ օծանելիքի խանութում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 3.65 մլն դրամ տուգանք,

հագուստի, կոշիկի եւ գործվածքների առեւտրի ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 2?25 մլն դրամ տուգանք,

հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի ոլորտում 3 հարկ վճարողի մոտ 3 դեպքով արձանագրվել է շուրջ 12.75 մլն դրամ տուգանք,

մթերային խանութում 2 հարկ վճարողի մոտ 2 դեպքով արձանագրվել է 2?26 մլն դրամ տուգանք,

մթերային խանութի, տնտեսական ապրանքների խանութի եւ այլ ոլորտներում 2 հարկ վճարողի մոտ 2 դեպքով արձանագրվել է 20 մլն դրամ տուգանք,

տնտեսական ապրանքների խանութի, առեւտրի իրականացման վայրի կազմակերպման ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 31.73 մլն դրամ տուգանք:

ՀԴՄ կիրառման կանոնների խախտում թույլ տված եւ 1.0 մլն դրամ եւ ավելի գումարով տուգանված 13 հարկ վճարողների անվանական ցանկը՝ ըստ գործունեության ոլորտների:

ՀԴՄ կիրառման կանոնների խախտում թույլ տված 614 հարկ վճարողների ցանկը»,-նշված է հաղորդագրության մեջ:

10 ՄԼՆ $-Ի ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Հայէկոնոմբանկը» եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) կնքել են 10 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի վարկային պայմանագիր ՎԶԵԲ 33-րդ գործարար համաժողովի շրջանակում:

Ներգրավված միջոցները կուղղվեն միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների վարկավորմանը: Համագործակցությունը միտված է նաեւ երկրի համաչափ զարգացմանը. միջոցների մի մասը կտրամադրվի Հայաստանի մարզերում բիզնես ֆինանսավորմանը:

Բանկի եւ ՎԶԵԲ-ի միջեւ կնքված այս համաձայնագիրն արդեն թվով 15-րդն է 2000թ.-ից մինչ օրս, իսկ, ընդհանուր առմամբ, հիշյալ գործընկերոջից ներգրավված միջոցները սույն պայմանագրով կհասնեն 83.0 մլն ԱՄՆ դոլարի:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐ»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԸ ՀԱՏԵՑ ԵԶՐԱԳԻԾԸ

«Խաչմերուկներ. ժամանակակից երաժշտության օրեր Հայաստանում» միջազգային փառատոնը հատեց եզրագիծը: Այն այս տարի տեղի ունեցավ ապրիլի 29-ից մայիսի 16-ը Երեւանում եւ Դիլիջանում: 7-րդ անգամ կազմակերպվող փառատոնը կրում էր «Հայկական խճանկար» խորագիրը: Այս տարվա արտիստներից էին Անդրիուս Հարությունյանը, Գաշիա Ուզունյանը, Հայկ Մելիքյանը, Ասոնանս անսամբլը, Երեւանի պետական կոնսերվատորիայի Բումերանգ անսամբլը եւ Երեւան լարային քառյակը:

«Մեծ ուրախությամբ եւ վստահությամբ կարող ենք արձանագրել, որ յոթերորդ փառատոնը հաջողությամբ կայացավ: «Խաչմերուկներ» ժամանակակից երաժշտության միջազգային փառատոնը միակն է Հայաստանում, որտեղ ներառվում են համաշխարհային ժամանակակից ակադեմիական երաժշտության մեծաքանակ նոր եւ նշանակալից գործեր: Ընդ որում՝ դրանց զգալի մասն առաջին անգամ է կատարվում, այսինքն՝ փառատոնը բեմ է հանդիսանում դրանց հայաստանյան եւ համաշխարհային պրեմիերաների համար: Փառատոնը մշտապես նպատակ ունի ապահովելու համաշխարհային ժամանակակից երաժշտության տարածումը եւ զարգացումը Հայաստանում: Ուստի տարբեր տարիներին այն իր ծրագրում ներառում է մի շարք նոր ստեղծագործությունների հայաստանյան պրեմիերաներ:

Հետամուտ լինելով մեր առաքելությանը՝ այս անգամ եւս հանրությանը ներկայացանք տարատեսակ հետաքրքիր համերգային ծրագրերով», - նշում են միջոցառման կազմակերպիչ «Քառորդ տոն» ՀԿ-ից:

Փառատոնի շրջանակներում այս տարի կազմակերպվեց վեց համերգ «Առնո Բաբաջանյան» համերգասրահում, Կամերային երաժշտության ազգային կենտրոնում, ՀԲԸՄ Հայաստան դահլիճում, Դիլիջանի միջազգային դպրոցում եւ The Office-ում:

Փառատոնի բացման համերգին Ասոնանս անսամբլը ներկայացրեց Արամ Հովհաննիսյանի, Ալիսիա Թերզյանի, Արթուր Ահարոնյանի, Արսեն Բաբաջանյանի, Ֆրանկ Քրիստոֆ Եզնիկյանի, Ստեփան Ռոստոմյանի ստեղծագործությունները:

Երեւանի պետական կոնսերվատորիայի Բումերանգ անսամբլը կատարեց Միքայել Մելիք-Վարդանյանի, Լեւոն Պողոսյանի, Վահրամ Բաբայանի, Նարինե Մխիթարյանի, Ռալֆ Քյոշքերյանի, Արամ Սաթյանի, Գոռ Իսպիրյանի, Վաչե Շարաֆյանի գործերը: Իսկ Դիլիջանի միջազգային դպրոցում (UWC Dilijan) Երեւանի պետական կոնսերվատորիայի Բումերանգ անսամբլը կատարեց Միքայել Մելիք-Վարդանյանի, Ռալֆ Քեոշքերյանի, Գոռ Իսպիրյանի, Լեւոն Պողոսյանի եւ Նարինե Մխիթարյանի գործերը:

Փառատոնի շրջանակում դաշնակահար, ՀՀ վաստակավոր արտիստ Հայկ Մելիքյանը կներկայացնի հեղինակային, ինչպես նաեւ Ալան Հովհաննեսի, Գեղունի Չթչյանի, Տիգրան Մանսուրյանի, Մարտուն Իսրայելյանի, Վարդան Աճեմյանի, Արթուր Ավանեսովի, Ռուբեն Անտոնյանի, Էլեն Յոլչյանի ստեղծագործությունները:

«Երեւան» լարային քառյակն էլ ներկայացրեց Սուրեն Ջաքարյանի, Աննա Հակոբջյանյանի, Արփինե Կալինինայի, Միխայիլ Կոկժաեւի գործերը:

Փառատոնի եզրափակիչ համերգին միավորվեց էլեկտրոնային եւ դասական երաժշտությունը՝ Անդրիուս Հարությունյանի ղեկավարությամբ: Հնչեցին Սերգեյ Ումրոյանի եւ Անդրիուս Հարությունյանի ստեղծագործությունները:

Վարպետության դասով հանդես եկավ երաժշտագետ, ձայնային տեսաբան Գաշիա Ուզունյանը:

Հավելենք, որ փառատոնի ծրագիրն ամեն տարի հնարավորություն է ստեղծում հայ երաժշտասեր հասարակության համար՝ մշտապես տեղեկացված լինելու արդի ժամանակակից դասական երաժշտության զարգացումներին եւ միտումներին, ինչպես նաեւ նպաստում է նոր ստեղծագործությունների ստեղծմանը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՐԵՐ՝ ՉԵԽԻԱՅՈՒՄ

Չեխիայի Հանրապետության Պրահա քաղաքում մայիսին երեք օր կանցկացվեն Հայ մշակույթի օրեր: Մայիսի 24-26-ը Պրահայի տարբեր հատվածներում կանցկացվեն տարբեր միջոցառումներ: Հայ ավանդական հագուստ, հայ ժամանակակից նկարիչների կտավներ, հայ ժողովրդական երգի համերգ. մշակութային օրերի ծրագիրն այսքանով չի սահմանափակվում:

«Հայկական տարազ եւ գեղանկարներ» խորագրով ցուցադրության ընթացքում մայիսի 25-26-ը Dum národnostních menšin (Ազգային փոքրամասնությունների տուն) հանրությանը կներկայացվեն Տերյան մշակութային կենտրոնի նմուշները: Բացի այդ, ArtInsigt հարթակի հետ համագործակցությամբ կներկայացվեն հայ նկարիչներ Հրաչյա Վարդանյանի, Կարեն Բարսեղյանի, Հարություն Կարապետյանի, Կարեն Պետրոսյանի, Գեւորգ Սարգսյանի (Ճալա/ Djala), Վահագն Համալբաշյանի, Լեւոն Ֆլջյանի, Գագիկ Չթչյանի, ինչպես նաեւ Մոկո Խաչատրյանի եւ Հրանտ Հարությունյանի նկարները:

Օրերի շրջանակում մայիսի 26-ին Պրահայի Հայ առաքելական եկեղեցում կկայանա համերգ, որին հանդես կգա սոպրանո Վարինե Մկրտչյանը: Կանցկացվեն նաեւ դասախոսություններ հայ մշակույթի տարբեր տարրերի թեմաներով: Մայիսի 25-ին Ֆրանսիական ինստիտուտի տարածքում կցուցադրվի Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը»:

Տոնական միջոցառումները նախաձեռնել է հայ-չեխական ARM կազմակերպությունը, որն ակտիվ գործունեություն է իրականացնում հայ մշակույթը Չեխիայում տարածելու եւ առաջխաղացնելու ուղղությամբ:«Մեր երկրի համար այս դժվարին ժամանակներում մենք փորձում ենք մշակույթի միջոցով սեւեռել Եվրոպայի ուշադրությունը մեր երկրի վրա: Այդ փաստը հաշվի առնելով՝ մենք որոշեցինք հանդես գալ հայ մշակույթը չեխ հանդիսատեսին ներկայացնելու նախաձեռնությամբ: Արդեն իսկ հասցրել ենք իրականացնել մի շարք ծրագրեր: Այժմ հերթը ավելի մասշտաբային՝ մշակույթի օրեր անցկացնելն է: Այս օրերի ընթացքում մենք կներկայացնենք հայ մշակույթի ներկապնակի մի փոքր հատված միայն, որն անտարբեր չի թողնի արտերկրի հանդիսատեսին»,-նշում է հայ-չեխական ARM կազմակերպության հիմնադիր տնօրեն Բելլա Կնյազչյանը:

ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ

Կամերային երաժշտության ազգային կենտրոնի, Երեւանի ժամանակակից արվեստի թանգարանի եւ «Հովեր» պետական կամերային երգչախմբի համատեղ ջանքերով մայիսի 21-ին տեղի կունենա գեղանկարիչ, Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ, պետական մրցանակի դափնեկիր Հակոբ Հակոբյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական տարվա միջոցառումների ամփոփումը:

Մայիսի 21-ին, 19:00-ին, Կամերային երաժշտության տանը «Հովեր» պետական կամերային երգչախումբը հանդես կգա համերգով, որը կուղեկցվի նկարչի աշխատանքների ցուցադրությամբ (աշխատանքները՝ Երեւանի ժամանակակից արվեստի թանգարանի հավաքածուից): Ցուցահանդեսը կգործի մինչ հունիսի 6-ը:

Համերգային ծրագրում՝ Յ.Ս. Բախ, Կ.Մոնտեվերդի, Կ. Ջեզուալդո, Յ. Բրամս, Ա. Բրուքներ, Ֆ. Մենդելսոն, Ռ. Շուման, Հ. Վոլֆ եւ Ի.Ստրավինսկի:

Համերգը ղեկավարում է Սոնա Հովհաննիսյանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

Ի՞ՆՉՊԵՍ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ԿԱՐԻԵՐԱՆ ՄԲԱՊԵՆ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի եւ Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Կիլիան Մբապեն խոսել է իր ապագայի մասին: 25-ամյա ֆուտբոլիստն ամռանը կհեռանա փարիզյան ակումբից:

«Իմ կարիերայի հաջորդ փուլը շատ գրավիչ կլինի: Ես պատրաստվում եմ նոր բաներ բացահայտել ինձ համար, եւ դա ինձ կդարձնի երջանիկ:

Իմ հայրը ցանկանում էր, որ ես նախքան Լիգա-1-ից հեռանալն իմ անունը գրեմ Ֆրանսիայի առաջնության պատմության մեջ: Դա երկար ճանապարհ էր: Ուրախ եմ, որ անցա այն:

Շնորհակալ եմ ՊՍԺ-ի բոլոր ներկայացուցիչներին եւ նախագահին: Կկարոտեմ: Բայց ես հեռանում եմ հպարտությամբ իմ ցուցադրած խաղի համար»,- Մբապեի խոսքը մեջբերում է Goal.com-ը:

Սպասվում է, որ Մբապեն կարիերան կշարունակի Մադրիդի «Ռեալում»: Այդ մասին պաշտոնական տեղեկություն դեռ չի եղել ֆուտբոլիստի կամ Արքայական ակումբի կողմից:

ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԸՆՏՐԱՆՈՒ ԱՆԴԱՄԸ՝ ՉԵՄՊԻՈՆ

Հայաստանի բասկետբոլի կանանց ազգային հավաքականի խաղացող Ինգա Մանուչարյանը դարձել Ղազախստանի ակումբային առաջնության հաղթող:

Հայաստանի կանանց ազգային հավաքականի խաղացող Ինգա Մանուչարյանը «Թուրանի» կազմում մասնակցել է Ղազախստանի կանանց առաջնության եզրափակիչ շարքի վերջին հանդիպմանը: «Թուրան»-ը 70:62 առավելության հասնելով «Ակտոբե»-ի նկատմամբ՝ դարձել է Ղազախստանի առաջնության չեմպիոն:

Մանուչարյանը վաստակել է 23 միավոր, 11 անգամ տիրել է օղակից անդրադարձող գնդակին եւ կատարել 8 արդյունավետ փոխանցում:

Հայազգի բասկետբոլիստը նաեւ ընդգրկվել է առաջնության լավագույն խաղացողների հնգյակում:

ՈՉ ՈՔԻ ԵՆ ԳՐԱՆՑԵԼ

Հայաստանը ներկայացնող շախմատիստները շարունակում են ելույթները Շարժայի շախմատային մրցաշարում:

ԱՄԷ-ում ընթացող 7th Sharjah Masters 2024 միջազգային մրցաշարի 3-րդ տուրում Հայաստանի ներկայացուցիչներ Շանթ Սարգսյանը, Մանուէլ Պետրոսյանը, Հայկ Մարտիրոսյանը եւ Սամվել Տեր-Սահակյանը ոչ-ոքի են ավարտել իրենց պարտիաները:

Շարժայի միջազգային մրցաշարն անցկացվում է շվեյցարական մրցակարգով եւ բաղկացած է 9 տուրից: Masters կարգի մրցաշարին մասնակցում է 88 շախմատիստ:

● *Մայիսի 26-ին՝ ժամը 21:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա Սերգեյ Դանիելյանի «Էն Լոռու ձորն է» մոնոներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ու՞մ կարող են նվիրվել բնակելի տարածքները ՀՀ-ում:

Սերգեյ Մելիքյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պետական մարմիններին ամրացված բնակելի տարածքները կարող են նվիրվել համապատասխան տարածքում հաշվառված եւ մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 1-ը փաստացի բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին (բացառությամբ սահմանամերձ համայնքներում բնակվողների, որոնց համար փաստացի բնակվելու ժամկետի սահմանափակում չի նախատեսվում), որոնք պետական աջակցությամբ իրականացված բնակապահովման ծրագրերի շրջանակներում երբեւէ բնակարան (բնակելի տուն) ձեռք չեն բերել կամ բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն չեն ստացել:

Պետական գույքի կառավարման կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական մարմիններին ամրացված բնակելի տարածքները կարող են նվիրվել նաեւ նրանց, ովքեր սեփականության իրավունքով չունեն անշարժ գույք (բացառությամբ բնակելի տարածքների նկատմամբ ընդհանուր կամ բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող բաժնեմասի, չկառուցապատված հողամասերի, բնակելի նշանակության օժանդակ շինությունների, ինչպես նաեւ ոչ բնակելի նշանակություն ունեցող շենքերի, շինությունների):

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է բաղաքացիական ծառայող դառնալու համար անհրաժեշտ կրթության չափանիշը:

Լիաննա Պետրոսյան (23 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար ՀՀ քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն, իսկ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում՝ համապատասխան մասնագիտական կրթություն՝ բացառությամբ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար, որոնց համար առնվազն միջնակարգ կրթություն է պահանջվում:

ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Առանձին դեպքերում մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար պաշտոնի անձնագրով կարող է սահմանվել բարձրագույն (մասնագիտական) կրթություն ունենալու պահանջ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Ավարտվել է ՀՀ բռնցքամարտի ավագ տարիքի պատանիների 2024 թվականի առաջնությունը, որը կայացել է Երեւանի «Միկա» մարզահամալիրում:

Գեղարքունիքի մարզը ներկայացնող Մարտունու մարզադպրոցի սան Սիմոն Սիմոնյանը (Ծովինար համայնք) 48 կգ քաշային կարգում, հաղթելով իր բոլոր մրցակիցներին, ճանաչվել է մրցաշարի հաղթող:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 + 3 +10 + 14
Կոտայքի լեռներ	+ 1 + 4 +10 + 12
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 8 +16 + 18
Գեղարքունիք	+ 1 + 5 +13 + 17
Լոռի	+ 2 + 5 +13 + 16
Տավուշ	+ 4 + 8 +17 + 19
Արագածոտնի լեռներ	0 + 4 +9 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 9 +16 + 19

Արարատ	+9 + 12 +20 + 23
Արմավիր	+ 8 + 10 +20 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +11 + 13
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +19 + 22
Սյունիքի հովիտներ	+ 8 + 12 +22 + 25
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 8 +14 + 17
ԼՂՀ	+ 7 + 9 +13 + 16
Երեւան	+ 13+ 15 + 15 + 17

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.5.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*